ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 10-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի ԹԻՎ 17-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ոստիկանության մասին» օրենքի 5.1-ին հոդվածի 10-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2020 թվականի մարտի 31-ի «Մարդու իրավունքների պաշտպանության, խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի հնարավոր դեպքերի կանխարգելման և բացահայտման նպատակով ոստիկանության ստորաբաժանումներում տեղադրված տեսագրող և տեսաձայնագրող համակարգերի տեխնիկական բնութագրերը, տեսագրությունների և տեսաձայնագրությունների պահպանման, օգտագործման կարգը, ինչպես նաև տեսագրմանն առցանց հետևելու, տեսագրություններին և տեսաձայնագրություններին հասանելիություն ունեցող ոստիկանության ծառայողների շրջանակը սահմանելու մասին» թիվ 17-Լ հրամանով սահմանված 2-րդ հավելվածի 10-րդ կետում «1-ին, 3-րդ և 4-րդ կետերով» բառերը փոխարինել «4-րդ ենթակետով» բառերով:

ԳՆԴԱՊԵՏ **Վ. ՂԱԶԱՐՅԱՆ**

«10» 03 2021թ.

ք. Երևան